ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
20.10.2023թ. թիվ 22/6-Լ որոշման

_____
Խորհրդի նախագահ
Սիմոն Բաբայան

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) հանրային պաշտպանի գրասենյակում (**այսուհետ՝ նաև ՀՊԳ**) առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի գործունեության ստուգման և գնահատման չափորոշիչները, ստուգման և գնահատման ընթացակարգը:

ԳԼՈՒԽ 2. ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀՏԱՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

2. Հանրային պաշտպանների գործունեության ստուգումն ու գնահատումն իրականացվում է իրենց կատարած աշխատանքի և դրա արդյունքների վերաբերյալ «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրում **(այսուհետ՝ Էլեկտրոնային ծրագիր)** մուտքագրված տվյալների, ինչպես նաև ստուգման և գնահատման գործընթացի շրջանակներում ՀՊԳ ղեկավարի, ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուների կողմից տրամադրված և սույն կարգով նախատեսված այլ տվյալների հիման վրա:

3. Ստուգումն ու գնահատումն իրականացնում է Պալատի խորհուրդը, իսկ գնահատման գործընթացը կազմակերպում է սույն կարգի 6-րդ գլխով նախատեսված գնահատման կազմակերպման հանձնաժողովը (**այսուհետ՝ Գնահատման կազմակերպման հանձնաժողով**):

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4. Էլեկտրոնային ծրագրում հանրային պաշտպանի կողմից լրացված տվյալների իսկությունը և հավաստիությունը պարզելու, ներառյալ՝ տրված հանձնարարությունները Պալատի ներքին իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով կատարելու հանգամանքները պարզելու նպատակով՝

ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուների կողմից իրականացվում են ուսումնասիրություններ:

5. ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուներն ուսումնասիրություններն իրականացնելու շրջանակներում հանրային պաշտպանից կարող են պահանջել Էլեկտրոնային ծրագրում լրացված տվյալների իսկությունը հավաստող փաստաթղթեր:

6. ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուներն ուսումնասիրություններն իրականցնում են մշտապես և դրանց արդյունքներն ամփոփում ու տեղեկանքի ձևով ներկայացնում են Գնահատման կազմակերպման հանձնաժողովին:

7. Հանրային պաշտպանը պարտավոր է ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուի պահանջած փաստաթուղթը՝ պահանջը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուների ուսումնասիրության արդյունքներն ամփոփելու և Գնահատման հանձնաժողովին սույն կարգով սահմանված ժամկետներում ներկայացնելու անհրաժեշտության դեպքում՝ ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուն կարող է սահմանել փաստաթուղթ ներկայացնելու առավել կարճ ժամկետ, բայց ոչ պակաս քան երկու աշխատանքային օր:

8. Էլեկտրոնային ծրագրում լրացված և սույն կարգով սահմանված գնահատման չափորոշիչներին համապատասխան գնահատման ենթակա տվյալ պարունակող փաստաբանական վարույթը մինչ արխիվ հանձնելը հանրային պաշտպանը պարտավոր է այդ տվյալի իսկությունը հավաստող փաստաթուղթը ներկայացնել մոնիթորինգի պատասխանատուին, որն այդ մասին իր մոտ կատարում է արձանագրում և հանրային պաշտպանի պահանջով տրամադրում է արձանագրություն:

9. Սահմանված ժամկետում պահանջված փաստաթուղթը ՀՊԳ մոնիթորինգի պատասխանատուին չներկայացվելու դեպքում Էլեկտրոնային ծրագրում լրացված տվյալը վերաբերելի մասով համարվում է ոչ հավաստի:

ԳԼՈՒԽ 4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

10. Հանրային պաշտպանի աշխատանքի գնահատման համար հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով, հիմք ընդունելով կատարված աշխատանքի արդյունքները և ծավալը, հաշվի են առնվում չափորոշիչների հետևյալ երեք խմբերը՝

1) ընդհանուր չափորոշիչներ.

2) վարույթն իրականացնող մարմինների նախաձեռնությամբ նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ.

3) քաղաքացիների դիմումների հիման վրա նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված չափորոշիչները սահմանված են սույն կարգի համապատասխանաբար հավելված 1-ում, հավելված 2-ում և հավելված 3-ում (**այսուհետ՝ Հավելվածներ**):[1]

[1] Վերաքննիչ և (կամ) վճռաբեկ դատարաններում այլ հանրային պաշտպանի բողոքի հիման վրա ներկայացուցչություն իրականացանող հանրային պաշտպանին տրամադրվում է հավելված 2-ով և հավելված 3-ով սահմանված միավորի մեկ երկրորդ չափով միավոր, իսկ տվյալ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը կազմած հանրային պաշտպանին տրվում է նշված հավելվածներով սահմանված

ԳԼՈՒԽ 5. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

12. Ընդհանուր գնահատումը նախապատրաստելու համար Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ իր տեղակալներից մեկը ոչ ուշ քան մինչև **ընթացիկ տարվա նոյեմբերի 5-ը** Գնահատման կազմակերպման հանձնաժողովին է ներկայացնում **տվյալ տարվա նոյեմբերի 1-ին նախորդող մեկ տարվա** ընթացքում **(այսուհետ՝ Հաշվետու ժամանակահատված)** յուրաքանչյուր հանրային պաշտպանի կատարած աշխատանքի՝ Հավելված 2-ին և Հավելված 3-ին համապատասխան լրացված նախնական գնահատման վերաբերյալ ամփոփաթերթեր **(այսուհետ՝ նաև Ամփոփաթերթեր)**:

13. Ամփոփաթերթերը կազմվում են հանրային պաշտպանների կողմից Էլեկտրոնային ծրագրում մուտքագրված տվյալների հիման վրա: Մուտքագրված տվյալների ճշգրտությունը ստուգելու, ինչպես նաև տեխնիկական և մուտքագրման ժամանակ թույլ տրված մեխանիկական սխալները բացառելու նպատակով Ամփոփաթերթերը, նախքան Գնահատման կազմակերպման հանձնաժողովին ներկայացնելը, հնարավորության դեպքում, ներկայացվում են (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) հանրային պաշտպաններին:

14. Հանրային պաշտպանը, ստանալով Ամփոփաթերթը, պարտավոր է ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) իր առաջարկությունը, եթե համաձայն չէ ներկայացված տվյալների հետ: Հանրային պաշտպանն առաջարկությանը կից պետք է ներկայացնի համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

15. Հանրային պաշտպանի կողմից սահմանված ժամկետում ստացված առաջարկության հիման վրա Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կամ ղեկավարի տեղակալներից մեկն հաստատում է ամփոփաթերթում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը կամ գրավոր մերժում է հանրային պաշտպանի առաջարկությունը: Հանրային պաշտպանի առաջարկությունները, ինչպես նաև դրանց հաստատման կամ մերժման դիրքորոշումները կցվում են հանրային պաշտպանների վերաբերյալ կազմված ամփոփաթերթերին:

16. Հանրային պաշտպանի առաջարկությունը չի կարող բավարարվել, և ամփոփաթերթում չներառված ցուցանիշը չի կարող հաշվարկվել, եթե դա Էլեկտրոնային ծրագրում հանրային պաշտպանի կողմից տվյալները ժամանակին չմուտքագրելու արդյունք է:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՂԻԿ ՄԻԱՎՈՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

17. Հաշվի առնելով Պալատի աշխատակազմի ղեկավարի ներկայացրած տեղեկություններն առկա թափուր հաստիքների քանակի վերաբերյալ, «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Մրցույթի կարգ**) 1.4. կետում նախատեսված թեկնածությունների ցուցակում հանրային պաշտպանի թեկնածուների քանակը, մարզերի դեպքում՝ նաև տվյալ տարածքը հանրային պաշտպանով ապահովելու անհրաժեշտությունը և այլ

միավորը: Նշված միավորները ամփոփվում են ըստ «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրի՝ հատուկ սյունակներում արդյունքներ և դրանց տրվող միավորներ հաշվարկելով:

հանգամանքները՝ Գնահատման կազմակերպման հանձնաժողովը մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 5-ը Պալատի նախագահին առաջարկում է հանրային պաշտպանների, բացառությամբ կես կամ մեկ քառորդ հաստիքներ զբաղեցնող հանրային պաշտպանների, այն թիվը (քանակը կամ տոկոսը, **այսուհետ՝ Անցողիկ թիվ**), որոնց հետ առանց մրցույթի անցկացման՝ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը կարող է երկարաձգվել ևս մեկ տարով:

18. ՀՀ փաստաբանների պալատի նախագահը երկու աշխատանքային օրվա ընթացքում իր որոշմամբ հաստատում է գնահատման հանձնաժողովի առաջարկը կամ սահմանում է այլ Անցողիկ թիվ:

19. Անցողիկ թիվը սահմանվում է այնպես, որ հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 30 (երեսուն) տոկոսը հնարավորություն ունենա Մրցույթի կարգով սահմանված կարգով առանց մրցույթի մասնակցության երկարաձգել իր աշխատանքային պայմանագիրը:

20. Անցողիկ թիվը սահմանվում է սույն կարգի 29-րդ կետում նշված յուրաքանչյուր ցանկի համար առանձին:

21. Կես կամ մեկ քառորդ հաստիքներ զբաղեցնող հանրային պաշտպաններին առանց Մրցույթի կարգով սահմանված մրցույթի մասնակցության պայմանագիրը երկարաձգելու հնարավորություն տալու հարցը լուծվում է սույն կարգի 28-րդ և 30-րդ կետերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄԸ

22. Մինչև նոյեմբերի 5-ը Գնահատման կազմակերպման հանձնաժողովի նախագահը՝

1) Պալատի վերապատրաստման հարցերով և կարգապահական գործերի համակարգողներից ստանում է համապատասխանաբար՝ հանրային պաշտպանների կողմից ընթացիկ տարում վերապատրաստում անցած լինելու մասին և հանրային պաշտպանների Պալատի խորհրդի կամ Պալատի կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական տույժի ենթարկած լինելու մասին տեղեկություններ.

2) Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուներից ստանում է Հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանների կողմից Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով նախատեսված փաստաբանական վարույթներին վերաբերվող, Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների կատարման ընթացքը կազմակերպելու մասին կարգի պահանջների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև Էլեկտրոնային ծրագրում մուտքագրված տվյալների հավաստիության վերաբերյալ տեղեկանքները.

3) Պալատի աշխատակազմի ղեկավարից ստանում է Հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանների՝ կարգապահական տույժի ենթարկված լինելու մասին տեղեկություններ:

23. Գնահատման կազմակերպման հանձնաժողովը, ստանալով Ամփոփաթերթերը և սույն կարգի 22-րդ կետում նախատեսված տվյալները, երեք աշխատանքային օրվա ընթացքում յուրաքանչյուր հանրային պաշտպանի վերաբերյալ քննարկում և լրացնում է սույն կարգի Հավելված 1-ով սահմանված

գնահատման ընդհանուր չափորոշիչները (նվազեցվող միավորների թերթիկը), ամփոփում է ստացված ամբողջ տվյալները և տեղեկանքի ձևով ներկայացնում է Պալատի խորհրդին հանրային պաշտպանների աշխատանքներին գնահատում իրականացնելու համար: Տեղեկանքում Գնահատման կազմակերպման հանձնաժողովը ներառում է նաև լրացուցիչ միավոր տրամադրելու առաջարկների և մարզում կես կամ մեկ քառորդ հաստիքի զբաղեցնող հանրային պաշտպանի կատարած աշխատանքի վերաբերյալ իր եզրակացությունները:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

24. Պալատի Խորհուրդը հանրային պաշտպանների գործունեության ստուգումն ու գնահատումն **(այսուհետ՝ գնահատում)** իրականացնում և արդյունքները հաստատում է **մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 15-ը**՝ Մրցույթի կարգով նախատեսված մրցույթները կազմակերպելու համար:

25. Անհրաժեշտության դեպքում Պալատի խորհուրդը կարող է գնահատման ժամանակ նիստին հրավիրել Գնահատման կազմակերպման հանձնաժողովի անդամներին (նախագահին), գնահատվող հանրային պաշտպանին: Գնահատմանը հրավիրված անձանց չներկայանալն արգելք չէ Պալատի խորհրդի կողմից գնահատումը հանրային պաշտպանի բացակայությամբ իրականացնելու համար:

26. Յուրաքանչյուր հանրային պաշտպանի աշխատանքի արդյունավետությունը հաշվարկվում է հետևյալ հիմնական բանաձևով՝

$$\text{ՀՊ ԸՄ}^{2} = \frac{\text{ՎԻՄ}+\text{ՔԴ}+\text{ԼՄ}^{3}}{\text{ԱԱՔ}} \times 12 - \text{ԸՉ}$$

որտեղ՝

ա) **ՎԻՄ**-ն (*քրեական վարույթն իրականացնող մարմինների նախաձեռնությամբ նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ*) հավելված 2-ում նշված միավորների հանրագումարն է.

բ) **ՔԴ**-ն (*քաղաքացիների դիմումների հիման վրա նշանակված հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչներ*) հավելված 3-ում նշված միավորների հանրագումարն է:

գ) **ԼՄ**-ն (*լրացուցիչ միավորներ)* Գնահատման կազմակերպման հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա հանրային պաշտպանին տրվող լրացուցիչ միավորներ (գործակիցներ) են՝ ՎԻՄ-ի և ՔԴ-ի հանրագումարի մինչև 30 (երեսուն) տոկոսի չափով:

ԼՄ-ն տրամադրվում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկով (Գնահատման կազմակերպման հանձնաժողովի դրական եզրակացությամբ), հաշվի առնելով առանձին գործերի բարդությունն ու ծավալը, հանրային պաշտպանի կողմից դրսևորված առանձնակի ջանասիրությունը, արձանագրված արդյունքներով հանրային պաշտպանի կողմից կազմված

[2] հանրային պաշտպանին տրվող ընդհանուր միավորը

[3] առկայության դեպքում

դատավարական և այլ փաստաթղթերի և կատարված գործողությունների որակն ու բարդությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ: Նշված առաջարկը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը ներկայացնում է գրավոր՝ նշելով տվյալներ կոնկրետ գործով հանրային պաշտպանի կատարած աշխատանքի վերաբերյալ և կցելով համապատասխան դատավարական և այլ փաստաթղթերի պատճեններն ու այլ հիմնավորող փաստաթղթեր:

ԼՄ-ն տրամադրվում է նաև Գնահատման կազմակերպման հանձնաժողովի նախագահի առաջարկով (Գնահատման կազմակերպման հանձնաժողովի դրական եզրակացությամբ)՝ հիմք ընդունելով գնահատման արդարացիությունն ապահովելու անհրաժեշտությունը, հանրային պաշտպանների զեկուցագրերում ներկայացրած հանգամանքները, էլեկտրոնային ծրագրում առկա տվյալները, հանրամատչելի կամ այլ՝ օբյեկտիվորեն հիմնավորվող փաստեր՝ ՎԻՄ-ի և ՔԴ-ի հանրագումարի նկատմամբ հաշվարկված որոշակի տոկոսի կամ բացարձակ մեծությամբ հաշվարկված միավորի չափով:

դ) **ԱԱՔ**-ն (*աշխատած ամիսների քանակը*) Հաշվետու ժամանակահատվածում հանրային պաշտպանի աշխատած ամիսների քանակն է ամբողջ թվերով (առանց մոտարկման):

ե) **ԸՉ**-ն (*ընդհանուր չափորոշիչները*) հավելված 1-ում նշված նվազեցվող միավորների հանրագումարն է:

27. Պալատի խորհուրդը Գնահատման կազմակերպման հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկանքի և դրան կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա ստուգում և գնահատում է յուրաքանչյուր հանրային պաշտպանի աշխատանքը՝ հաստատելով նրա կատարած աշխատանքի ցուցանիշը (միավորը): Հանրային պաշտպանի աշխատանքի արդյունավետության ստուգման և գնահատման հաշվարկման հիմքում դրված ցուցանիշները և հաշվարկման արդյունքը յուրաքանչյուր հանրային պաշտպանի համար ամփոփվում է սույն կարգի **Հավելված 4-ի համաձայն** լրացված գնահատման ամփոփագրում**:**

28. Գնահատման արդյունքներով, ըստ հանրային պաշտպանների աշխատանքների գնահատման վարկանիշային միավորների[4] (բացառությամբ՝ Մարզում կես կամ մեկ քառորդ հաստիքի զբաղեցնող հանրային պաշտպանների), Պալատի խորհուրդը կազմում է հետևյալ ցանկերը.

1) Երևան քաղաքի քրեական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ.

2) Երևան քաղաքի քաղաքացիական ուղղվածության հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ,

3) ըստ յուրաքանչյուր մարզի հանրային պաշտպանների աշխատանքների արդյունավետության գնահատման ցանկ (մասնագիտացումների դեպքում՝ նաև ըստ մասնագիտացումների):

29. Մարզում կես կամ մեկ քառորդ հաստիք զբաղեցնող հանրային պաշտպանի կատարած աշխատանքի գնահատումը կատարվում է ՀՊԳ ղեկավարի առաջարկի և Գնահատման կազմակերպման հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

30. Ցանկերից յուրաքանչյուրից Պալատի խորհուրդը դուրս է բերում Անցողիկ թվին համապատասխանող հանրային պաշտպանների վերաբերյալ տվյալները,

[4] Գնահատման ցանկերում հանրային պաշտպանների թվարկումն իրականացվում է ըստ ստացած միավորների՝ առավելագույնից նվազագույն:

ինչպես նաև Գնահատման կազմակերպման հանձնաժողովի դրական եզրակացությամբ առանց Մրցույթի կարգով սահմանված մրցույթի մասնակցության աշխատանքային պայմանագրի երկարաձգելու հնարավորություն ստացած մարզում կես կամ մեկ քառորդ հաստիքի զբաղեցնող հանրային պաշտպանների վերաբերյալ տվյալները, որոնք ընդգրկվում են մեկ միասնական ցանկում (ազգանունների այբբենական կարգով)՝ կազմելով առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանների միասնական ցանկը (այսուհետ՝ Միասնական ցանկ): Միասնական ցանկը հաստատելու մասին Պալատի խորհուրդը կայացնում է որոշում:

31. Հանրային պաշտպանը, որը հաշվետու ժամանակահատվածում աշխատել է ավելի պակաս քան չորս ամիս, համարվում է Անցողիկ միավոր ստացած:

Անցողիկ միավոր ստացած են համարվում նաև այն հանրային պաշտպանները, որոնք գնահատումն իրականացնելու ժամանակ գտնվում են զորահավաքային զինվորական ծառայության մեջ կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցում են Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին:

32. Պալատի խորհրդի կողմից հաստատված Միասնական ցանկը երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է ՀՊԳ ղեկավարին՝ տեղեկացնելու համար յուրաքանչյուր հանրային պաշտպանի իր՝ ա) գնահատման արդյունքների և բ) Միասնական ցանկում ընդգրկված լինելու կամ ընդգրկված չլինելու մասին:

33. Պալատի խորհրդի կողմից հաստատված միասնական ցանկում ընդգրկված հանրային պաշտպանին հնարավորություն է տրվում աշխատանքային պայմանագիրը երկարաձգել ևս 1 (մեկ) տարով:

ԳԼՈՒԽ 6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

34. Գնահատման կազմակերպման հանձնաժողովը կազմված է 7 (յոթ) անդամներից՝ հանձնաժողովի նախագահից և հանձնաժողովի 6 (վեց) անդամներից:

35. Գնահատման կազմակերպման հանձնաժողովի ի պաշտոնե կազմն է՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալը.

Գնահատման կազմակերպման հանձնաժողովի անդամներ՝

2) ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը,

3) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը,

4) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջին տեղակալը,

5) Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալը:

(կետը լրացվել է 07.03.2025թ. թիվ 5/28-Լ որոշմամբ)

36. Գնահատման կազմակերպման հանձնաժողովի **երկու փաստաբան անդամներին** (վերջիններիս համաձայնությամբ) փաստաբանների կազմից նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը՝ նախապատվությունը

տալով հանրային պաշտպանի աշխատանքի փորձառություն ունեցող փաստաբաններին:

37. Գնահատման կազմակերպման հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Գնահատման կազմակերպման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է գնահատման հանձնաժողովի առնվազն չորս անդամ: Քվեարկության դրված հարցը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին. ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

38. Գնահատման կազմակերպման հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է գնահատման հանձնաժողովի աշխատանքները.

2) ստորագրում է Գնահատման կազմակերպման հանձնաժողովի փաստաթղթերը:

39. Գնահատման կազմակերպման հանձնաժողովի նիստերն արձանագրում և փաստաթղթերի նախագծերը կազմում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալը: